անհուն զօրօք խաղաց զնաց ի մօտակայ վայրէս մերձ առ Բերիայ և նստէր անդ ոչինչ հոգ տանելով՝ եթէ խոնարհեսցի կարմընջեցին, և կամ թէ յորում ժամանակի եւս զնայ իւրն համարեալ, զի թագաւորն լուեալ իւր՝ զնայ սպանցէ, և ինքն գեր ի վերոյ քան զնայ, ասելով՝ Զի՞նչ պակասութիւն իմ, առաւել քան զնա և գեր քան զթագաւորս։ Եւ զինքն բարեկամս և հնազանդ կերպիւ՝ զօրս եդեալ զօրագլխօք, և զգանձն Եգիպտոսի յղէր առ թագաւորն, որ կայր ի վաղուց արգիլեալ ի ճանապարհի յերկիւղէ նորին, որ ամենեցուն կարծիք էր՝ թէ յափ[շտակեալ էր]։ Եւ վէզիրն խորհէր ընդ այն՝ թէ զի՛նչ արասցէ, զի ոչ յետ կային և ոչ յառաջ, և զմանսուպս նոցա տուեալ էր այլոց փաշայից, և ոչ կարէին նոքա երթալ անդ կամ ի ճանապարհ այն ելանել։ Եւ գրեաց յարքայէ գիր առ Մուրթազայ փաշայ, որ տիրէր Ամթայ, որ ունէր օրինակ զայս. Դու որ Մուրթազայ լալայ իմ ես, կամիմ զօրաժողով առնել քո և ելանել ի վերայ ապըստամբին և հակառակին իմ Հասանի. եթէ յաղթեցեր քոյին մեծաւ քաջութեամբդ՝ սիրելի մեծ ունիմ զքեզ և հաւատարիմ մինչև ցմահ. և յիշխանութիւնս իմ և ի տէրութեան իմում որքան պիտոյ է քեզ զօրս՝ պատրաստեսցես և արասցես լինել ընդ քեզ, և ճակատեսցիս դու քոյին մեծաւ իմաստութեամբդ. արի լիցիս դու։ Եւ գրեալ առ ամենայն պէկլէրպէկիս եւ փաշայս երթալ և օգնել նմա՝ Անատօլոյ և Ռումէլոյ, Ամթայ և Վանայ, Սերաստիու և Մարաշու և որք որ ի մուհավէզէ կային և որք ընդ նմա ի պատերազմ էին, զամենեսեան առաքեաց առ նա, և ասէին՝ Այսպէս պատրաստեցաւ զօրքն մինչև ժ անգամ ՃՌ արանց, քանզի նէֆիրամ անուն արարին հրամանաւ և խէթով արքայի։ Եւ նա տեսեալ զգիր, էր նա և գաղտահաւատ և մեծահանճար խիստ, ժողովէ փոքր փոքր